

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻՆ

Շատ հարգելի պրոֆեսոր.

Ձեր «Հայ բարբառագիտության ներածություն» շահեկան գրքի մեջ գործածում եք խոտորչուրի բարբառի հետ միասին նաև ինգաձորի բարբառու Մեզ զարմացրեց այդ և տարակուսանքներ առաջացրեց: Ընթերցողը պիտի եզրակացնի, թե գոյություն ունի երկու տարբեր բարբառ՝ խոտորչուրի և ինգաձորի: Մեր գիտցածով ինգաձորի առանձին բարբառ չկա, որովհետև ինգաձոր գյուղացիները խոսում էին ճիշտ ու ճիշտ խոտորչուրի ընդհանուր բարբառով:

Խոտորչուրի գավառակը ունեն 9 գյուղ, որոնցից 8-ը (Ճիճապաղ, Կիսակ, Միջինթաղ, Խընդաձոր, Սունինց, Կաղմուխուտ, Վահնա և Քեղուտ-Ցուցուլան) խոսում էին միևնույն բարբառով, ոչ մի տարբերություն չկար այդ 8 գյուղերի խոսվածքի մեջ, բայց իններորդ գյուղը՝ Կրմանը, խոսում էր իր ուրույն բարբառով, որը ավելի մոտ էր արևմտահայ գրական աշխարհաբարին: Օրինակ՝ խոտորչուրի վերոհիշյալ 8 գյուղերը ասում են. այտ, սայդ, վայ այի, պայ այի, հոյդ, մոյդ, սայն ի վեյ և այլն, իսկ Կրմանցիք ասում են՝ արտ, սարդ, վար արի, պար արի, հորդ, մորդ և այլն: Իսկ բառապաշարում տարբերություններ չկան:

Ցանկալի է իմանալ, թե ինչու՞ ինգաձորի բարբառ տերմինն եք գործածել: Գուցե նրբություննե՞ր եք ճկատել, որ մեզ անհայտ են եղել, ուստի խնդրում ենք նեղություն քաշել մեզ բացատրելու այդ:

Ի դիմաց ծրանում և Խրիլիսիում ապրող շատ խոտորչուրցիների՝

Թ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարգելի բարեկամ.

Ձեր նամակում Դուք գրում եք, որ ես «Հայ բարբառագիտության ներածություն» շահեկան գրքի մեջ գործածում եմ (?) խոտորչուրի բարբառի հետ միասին նաև ինգաձորի բարբառ», և որ դրանից ընթերցողը կարող է եզրակացնել, թե «գոյություն ունի երկու տարբեր բարբառ՝ խոտորչուրի և ինգաձորի»: Այս մասին հարկ եմ համարում նշել հետևյալը.

1. Գրքում ես չեմ գործածել ոչ «ինգաձորի բարբառ» և ոչ էլ «խոտորչուրի բարբառ» արտահայտությունները. ինչպես երևում է 7-րդ աղյուսակից (132-րդ էջ) ինգաձորի (և, հետևաբար, խոտորչուրի գավառակի՝ Ձեր նշած ութ գյուղերի) խոսվածքը մտնում է Կարնո բարբառի մեջ. և՛ թե ես ավելի մանրամասն դասակարգում կատարեի, ապա կտարբերեի խոտորչուրի ենթաբարբառ (ներառյալ ինգաձորի խոսվածքային վիճակը)՝ Կարնո բարբառի սահմաններում:

2. Բյուրիմացությունն առաջացել է հավանաբար նրանից, որ Ձեր ուշադրությունից վրիպել են գրքի ներածական բաժինները (հատկապես «Բարբառախոս վայրերի ընտրությունը» բաժնի որոշ դիտողությունները): Ավելի ուշադիր լինելու դեպքում Դուք կնկատեիք, որ հայոց լեզվի բարբառային վիճակն ստուգելու համար բարբառային որոշ միասնություն ունեցող այս կամ այն տերիտորիալ շրջանից գրքում ընտրվում է մեկ կամ մի քանի բնակավայր (քաղաք, գյուղ)¹. այսպես, խոտորչուրից ընտրվում է ինգաձորը, Ջանիկից՝ Մարթիլը, Մոտկանից՝ Նիչը, Տավուրիկից՝ Այգեատունը (էգեատուն) և այլն: Այս դեպքում բնականաբար ենթադրվում է, որ տվյալ բնակավայրի բարբառային վիճակը ընդհանուր գծերով արտացոլում է ողջ տերիտորիալ շրջանի

¹ Գրքի 33-րդ էջի 2-րդ ծանոթության մեջ նշված է. «Սովորաբար տրվում են բնակավայրերի անուններ, հազվադեպ միայն (համապատասխան տվյալների բացակայության դեպքում)՝ շրջանների (գավառների) անուններ»:

վիճակը: Այսպիսով, խոսք լինել շի կարող հոտորջուրի և հնդաձորի առանձին բարբառներ կամ ենթաբարբառներ տարբերելու մասին. ինչ որ տրվում է հնդաձորի վերաբերյալ, դիտվում է որպես հոտորջուրի համար բնորոշ ընդհանրապես (իհարկե, բացի Ձեր նշած Կրման գյուղից): Այդ է պատճառը, որ ավելի վաղ ժամանակների բարբառային վիճակի մասին խոսելիս հնդաձորի անունը փոխարինվում է լեզվականորեն համարժեք հոտորջուրի անունով (հմմտ. էջ 183, 201, 203 և այլն):

Թյուրիմացությունը թերևս մասամբ բացատրվում է նրանով, որ գրքում կիրառված սկզբունքներն ու մեթոդները նոր են, և դրանց ընկալումը ավանդական մեթոդներին ծանոթ մարդկանց համար դժվար է: Այնուամենայնիվ շնորհակալ եմ Ձեր գիտական շահագրգռվածության և այն բանի համար, որ առիթ տվեցիք մի անգամ ևս արժարժեքի բարբառագիտական ընույթի հետաքրքրական հարցեր:

Հարգանքով՝ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ